ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՕՐԵՐ

Արմենպրեսի հատուկ թղթակիցներ Լ. ԱԶՐՈՑԱՆԸ և Ջ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆԸ, որոնք հավատարմագրված են ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանում, հաղորդում են.

Սեպտեմբերի 28-ին «Մոսկվա» հյուրանոցի նախասրահ լցվեցին հարյուրավոր մարդիկ՝ Ադրբեջանից փախած գաղթականներ, որոնցից շատերը երեխաների հետ էին։ Նրանք պահանջեցին, որ ԽՍՀՄ-ի ժողովրդական դեպուտատներն իջնեն իրենց մոտ։ Նրանք պահանջում էին կոնստրուկտիվ կերպով լուծել Ղարաբաղի խնդիրը, որը երկու դրացի ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների պիրկ հանգույցի է վերածվել, ժողովուրդներ, որոնք հայտնվել են չհայտարարված պատերազմի պայմաններում։

Ադրբեջանի մայրաքաղաքի նախկին բնակիչները հատկապես նշում էին, որ իրենց վռնդել են իրենց աշխատանքային կոլեկտիվներից, բնակարաններից ու տներից, որտեղ ապրել են տասնյակ տարիներ։

— Մի՞թե կարելի է ամիսներ շարունակ թափառել ու ծվալել ազգականների ու ծանոթների մոտ, մնալ առանց աշխատանքի, առանց գոյության միջոցների,— հարցնում էին նրանք։

Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից, ինչպես նաև երկրի տարբեր շրջաններից ընտրված ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները ջանում էին հանգստացնել մարդկանց, բայց որոշակի ոչինչ չէին կարողանում ասել։ Երկու հանրապետությունների դիմակայությունը, որը վերածվել է շատ սուր կոնֆլիկտի, շարունակում է պահպանվել։

Իսկ այդ ժամանակ վրդովված մարդկանց մոտով անտարբեր անցան նրանց նախկին համերկրացիներ, Ադրբեջանի դեպուտատական կազմի անդամները՝ «մարդկային հոգիների ինժեներ» Ա. Անարը, պատմաբան Փ. Ազիզբեկովան, պատգամավորության մյուս անդամները։ Տեսնելով այդ, ակամայից մտածում ես, թե մամուլում և կենտրոնական հեռուստատեսությամբ հաղորդվող պատասխանատու ելույթներում ինչքան փարիսեցիական են հնչում Ադրբեջանի պաշտոնատար անձանց բազում հավաստիացումները երկու եղբայր ժողովուրդների սրտացավ փոխհարաբերությունների, բազմահազարանոց մարդկային դրամայի էության մեջ խորամուխ լինելու նրանց պատրաստակամության մասին։

Դժվարին օրեր են ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համար։ Նրանց առջև ծառացած են կարևորագույն խնդիրներ, որոնք անհետաձգելի լուծում են պահանջում։ Երկիրն ականատես էր այն բանին, թե ԽՍՀՄ Գերագույն խորհրդի զույգ պալատների առաջին լիագումար նիստում կրքերի ինչպիսի բորբոքման և համընդհանուր մտահոգության պայմաններում էին որոշվում օրակարգի առաջնային հարցերը, որոնք ընդունվեցին ուղղումներով։

Արդեն սկսվել է կառավարության կողմից մշակված սոցիալ-տնտեսական բարեփոխումների լայն ծրագրի քննարկումը։ Այդ մասին բավականաչափ հանգամանորեն հաղորդվում է մամուլում։

Սակայն դրա հետ մեկտեղ կա նաև այլընտրական ծրագիր, որը մշակել է այսպես կոչված միջռեգիոնալ դեպուտատական խումբը։

— Ինչո՞վ է պայմանավորված միջռեգիոնալ դեպուտատական խմբի կազմակերպումը, ինչպիսի՞ն է նրա պլատֆորմը,— հարցրինք Գ. Ստարովոյտովային։

— Այն գոյացավ երկրում իրականացվող բարեկարգումների տեմպերից ու խորությունից մեր ընդհանուր անբավարարվածության, տնտեսության բնագավառում և հատկապես ազգային հարցում առաջանցիկ քաղաքականության բացակայության հիման վրա, — ասաց նա։— Այսպես, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի օրակարգում, որտեղ դրված են մի շարք կարևորագույն օրինագծեր, տնտեսական կանոնադրություններ, ազգային հարցը փաստորեն բացակայում է, այն դեպքում, երբ այսօր այդ հարցը համար առաջինն է։ Եթե պառլամենտականներս սկսենք այն լության մատնել, ապա դա ամենևին չի նշանակի, թե խնդիրը գոյություն չունի կամ էլ այն կկարգավորվի ինքնըստինքյան։

— Որո՞նք են ձեր առաջնային հարցերը։

— Շատ կարևոր է պնդել, որ մոտակա լիագումար նիստերում քննարկվի և ուշադրության առնվի ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների արտահերթ համագումար հրավիրելու հարցը։ Ինչպես գիտեք, սահմանադրական հիման վրա դա է պնդում Հայկական ԽՍՀ-ի պառլամենտը։ Հայաստանի Գերագույն խորհրդի այդ որոշմանը իրենց ձայնն են միացնում միջռեգիոնալ խմբի 300-ից ավելի ժողովրդական դեպուտատներ։ Միջռեգիոնալ խմբի կարծիքով, ինքն ունի լուրջ առաջարկությունների ծրագիր, որը պետք է դրվի համագումարի քննարկմանը։

— Պատմեցեք այդ ծրագրի հիմնական դրույթների մասին։

— Այն ծավալուն է և դժվար է նույնիսկ ընդհանուր գծերով ներկայացնել։ Բայց կաշխատեմ։ Խմբի անդամների կարծիքով, մեր երկրի սոցիալ-տնտեսական կառուցվածքի հիմքում են ընկած ազգային շատ կոնֆլիկտների սաղմեր։ Ազգային պետական կազմավորումների գոյություն ունեցող սանդղակարգի հետևանքով մեր ժողովուրդները ասես բաժանված են տեսակների. միութենական կամ ինքնավար հանրապետությունում, ինքնավար մարզում կամ ազգային օկրուգում ապրողները միատեսակ իրավունքներից չեն օգտվում։ Պատմական ճակատագրի բերումով ժողովրդի մի մասը կամ էլ մի ամբողջ ժողովուրդ հայտնվել է այլ ժողովուրդներից կախյալ վիճակում։ Ժողովուրդների նման վիճակը հակասում է իրավահավասարության սկզբունքներին և պետք է վերացվի։ Բացի այդ, մենք այսօր չունենք ազգերի ինքնորոշման իրավունքի օրենսդրական երաշխիքներ։

Մեր կարծիքով, միջռեգիոնալ դեպուտատական խմբի առաջարկած բարեկարգումը ընդունակ է էապես վերացնել առկա բոլոր հակասություններն ու անարդարությունը։ Մենք այն կարծիքին ենք, որ ԽՍՀՄ-ում պետք է թողնել ազգային պետական ինքնուրույնության մեկ ձև՝ միութենական հանրապետություն, անկախ նրա տարածքից, բնակչության թվից, արտաքին սահմանի առկայությունից։ Եվ Ռուսաստանը, և Ուկրաինան, և Թաթարիան, և Չուկոտիայի ազգային օկրուգը, և Լեռնային Ղարաբաղը՝ բոլորը պետք է հավասար իրավունքներով մտնեն խորհրդային նոր ֆեդերացիայի մեջ։

Նրանց՝ այդ իրավահավասար «գործընկերների» միջև պետք է կնքվի դաշնակցային նոր պայմանագիր, քանի որ ԽՍՀՄ-ի կազմավորման 1922 թվականի պայմանագիրը այլևս չի արտացոլում այսօրվա պատմական իրողությունը։ Ընդորում, այդ պայմանագրում պետք է արտացոլված լինի այն լիազորությունների շրջանակը, որոնք հանրապետությունները՝ մեծ թե փոքր, վերապահում են կենտրոնական ֆեդերալ կառավարությանը։ Պետք է նաև մշակել այդ լիազորությունների շրջանակը։ Հավանաբար, դրանք կապված կլինեն երկրի ընդհանուր պաշտպանության, միջազգային հարցերի, մասամբ տնտեսության հետ և այլն։

— Ինչքա՞ն այդպիսի իրավահավասար ինքնավար հանրապետություններ կարող են գոյանալ մեր երկրում։

— Մենք հաշվել ենք 53-ը։ Բայց այդ թիվը կարող է փոխվել, եթե հանրապետություններն իրենց ցանկությամբ միանան։ Մեր երկրում գոյություն ունի բուրիաթական երեք կազմավորում՝ մեկ ինքնավար հանրապետություն և երկու ազգային օկրուգ։ Հավանաբար նրանք կուզենան միավորվել։ Նույնպիսի վիճակի մեջ են նենեցները՝ երեք կազմավորում։ Կա, կարելի է ասել, երկու Հայաստան...

Մի՞թե նորմալ է, երբ սահմանը անմիջականորեն անցնում է ազգի կենդանի մարմնի միջով։

— Գալինա Վասիլևնա, մի քանի խոսք ասեք Արկադի Մանուչարովին դեպուտատական մանդատ հանձնելու առաքելության մասին, որը դրվել էր ձեր և ակադեմիկոս Սախարովի վրա։

— Հանձնումը չկայացավ։ Բուտիրյան բանտի պետը հյուրընկալորեն ընդունեց մեզ, բայց պատասխանատվություն չստանձնեց ինքնուրույն լուծելու այդ կարգի խնդիրը։ Սակայն մեր խնդրանքով մեզ առաջնորդեց դեպի այն խուցը, որի մեջ ներկայումս պահվում է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ Ա. Մանուչարովը։ Մենք դիտանցքով նայեցինք և մեր խոստման համաձայն չխոսեցինք Արկադիի հետ։ Ա. Մանուչարովը իրեն լավ է զգում, առողջ է, տեսքը վատ չէ։ Բանտախցում երեք հոգով են, իրադրությունը նորմալ է։ Երկուսը շախմատ էին խաղում, իսկ Մանուչարովը հանգիստ հետևում էր խաղին և ծխում։

Այժմ մենք սպասում ենք նրա ազատման վերջնական որոշմանը։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի բացման օրը ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Սամվել Գալստյանը Մ. Ս. Գորբաչովին հանձնեց Ա. Մանուչարովին կալանքից ազատ արձակելու դիմում, որն ստորագրել են 156 դեպուտատներ։